ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3

ԵՊՀ ԻՄ Տնտեսագիտության ֆակուլտետի գիտխորհրդի նիստի

15.10. 2021թ. ք. Իջևան

Նախագահ՝ Գ. Ավետիսյան /դեկանի պաշտոնակատար/
Քարտուղար՝ Ա. Ալեքսանյան

Առցանց կազմակերպած նիստին մասնակցել են Մ. Միքայելյանը, Գ. Հովհաննիսյանը, Ա. Պոտոսյանը, Հ. Մարգարյանը, Գ. Մինասյանը, Գ. Ալեքսանյանը, Ա. Ուլիխանյանը, Ա. Եգանյանը, ֆակուլտետի ՈՒԳԸ-ի նախագահ Ի. Վարդանյանը, ֆակուլտետի ՈՒԽ-ի նախագահ Ա. Եսայանը, Հ. Սանթրոսյանը, Ա. Բարսեղյանը: Նիստը անց է կացվել zoom.us հարթակում, գիտական խորհրդի նախագահն է Գ. Ավետիսյան, քարտուղարը՝ Ա. Ալեքսանյանը:

Նիստի օրակարգը ներկայացրեց Գ. Ավետիսյանը:

Օրակարգ

1. Ֆակուլտետի 2020-2021 ուստարվա տարեկան քննաշրջանների արդյունքների քննարկում և ամփոփում: /Զեկ. Գ. Ավետիսյան/
2. 2020-2021 ուստարվա երկրորդ կիսամյակի լուծարքային շրջանի ամփոփում:/Զեկ. Գ. Ավետիսյան/
3. Հաղորդում ամբիոններում 1-ին կիսամյակի դասընթացների փաթեթների առկայության և վերանայման ընթացքի մասին/Զեկ. Մ. Միքայելյան, Գ. Հովհաննիսյան/:
4. Հաղորդում 1-ին կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների նախապատրաստական աշխատանքների մասին /Զեկ. Գ. Ավետիսյան/:
5. ՄԿՈԱ բաժնի կողմից իրականացված ԵՊՀ Իջևանի մասնաճյուղից բավարարվածության ուսանողական հարցման /2020-21ուստարի/ արդյունքների ներկայացում /Զեկ. Մ. Միքայելյան, Գ. Հովհաննիսյան/:
6. Ընթացիկ հարցեր

6.1 ԵՊՀ ԻՄ ներքին դրամաշնորհային ծրագրով ֆինանսավորված Ֆակուլտետի Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի պրոֆեսոր Մ. Միքայելյանի ղեկավարությամբ իրականացվող «Սեփականության իրավունքի հատկորոշվածության խնդիրները կորպորատիվ կառավարման համակարգում (Տավուշի մարզի կազմակերպությունների օրինակով)» թեմայով հետազոտական աշխատանքի կատարման ընթացիկ հաշվետվության: /Զեկ. Մ. Միքայելյան/

6.2 ԵՊՀ ԻՄ ներքին դրամաշնորհային ծրագրով ֆինանսավորված Ֆակուլտետի Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի պրոֆեսոր Գ. Հովհաննիսյանի ղեկավարությամբ իրականացվող «Լուսահովիտ համայնքի գյուղական զբոսաշրջության զարգացման նախագծի մշակում» թեմայով հետազոտական աշխատանքի կատարման ընթացիկ հաշվետվության մասին: / Զեկ.Գ. Հովհաննիսյան/

Բաց քվեարկությամբ 14 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ որոշվեց.

Որոշում 2/1

¬ Հաստատել նիստի օրակարգը:

1. *Լսեցին.- Ֆակուլտետի 2020-2021 ուստարվա տարեկան քննաշրջանների արդյունքների քննարկման և ամփոփման մասին /Զեկ. Գ. Ավետիսյան/:*

Գ. Ավետիսյանը հաղորդեց, որ Տնտեսագիտության ֆակուլտետում 2020-2021 ուստարվա առաջին կիսամյակի քննաշրջանին մասնակցել են 118 ուսանող: «Ֆինանսներ» կրթական ծրագրով 75 ուսանող, զբոսաշրջություն կրթական ծրագրով 43 ուսանող: Քննաշրջանը հաղթահարել են 95 ուսանող, 16 ուսանող ստացել են գերազանց գնահատականներ /«Ֆինանսներ» ԿԾ 8, «Զբոսաշրջություն» ԿԾ 8 ուսանող/: Ֆակուլտետում բացարձակ առաջադիմությունը կազմել է 80,51% /«Զբոսաշրջություն» ԿԾ՝ 81,4%, «Ֆինանսներ» ԿԾ՝ 80,51%/: Անբավարար գնահատականներ ստացել են 23 ուսանող/«Ֆինանսներ» ԿԾ 15, «Զբոսաշրջություն» ԿԾ 8 ուսանող/: Անվճար ուսուցման համակարգով սովորում են 35 ուսանող/«Ֆինանսներ» ԿԾ 21, «Զբոսաշրջություն» ԿԾ 14 ուսանող/, բացարձակ առաջադիմությունը կազմում է 100%: Վճարովի ուսուցման համակարգով սովորում են 83 ուսանող/«Ֆինանսներ» ԿԾ 54, «Զբոսաշրջություն» ԿԾ 29 ուսանող/, քննաշրջանը հաղթահարել են 60 ուսանող, բացարձակ առաջադիմությունը կազմում է 72,29%:

Քննաշրջանը կազմակերպվել է սահմանված ժամկետներում, որոշ դասընթացներ հեռավար, իսկ որոշ դասընթացներ լսարանային տարբերակներով: Հեռավար քննությունները տեսաձայնագրվել են: Գրավոր բողոքներ չկան: Կիսամյակի ընթացքում սահմանվել էին 3 ընթացիկ քննություններ և ստուգումներ, որի արդյունքում որոշ դասընթացներ գնահատվեցին միանգամից 20 միավորով և իրականացվեցին քննաշրջանի ընթացքում:

Տնտեսագիտության ֆակուլտետում 2020-2021 ուստարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանին մասնակցել են 114 ուսանող: «Ֆինանսներ» կրթական ծրագրով 73 ուսանող, զբոսաշրջություն կրթական ծրագրով 41 ուսանող: Քննաշրջանը հաղթահարել են 94 ուսանող, 12 ուսանող ստացել են գերազանց գնահատականներ /«Ֆինանսներ» ԿԾ՝ 8, «Զբոսաշրջություն» ԿԾ՝ 4 ուսանող /: Ֆակուլտետում բացարձակ առաջադիմությունը կազմել է 82,46% / «Զբոսաշրջություն»ԿԾ՝ 82,93%, «Ֆինանսներ»

ԿԾ՝ 82,19%/: Անբավարար գնահատականներ ստացել են 20 ուսանող /«Ֆինանսներ» ԿԾ՝ 13, «Զբոսաշրջություն» ԿԾ՝ 7 ուսանող/: Անվճար ուսուցման համակարգով սովորում է 35 ուսանող /«Ֆինանսներ» ԿԾ՝ 21, «Զբոսաշրջություն» ԿԾ՝ 14 ուսանող/, բացարձակ առաջադիմությունը կազմում է 100%: Վճարովի ուսուցման համակարգով սովորում են 79 ուսանող /«Ֆինանսներ» ԿԾ՝ 52, «Զբոսաշրջություն» ԿԾ՝ 27 ուսանող/, քննաշրջանը հաղթահարել են 59 ուսանող/«Ֆինանսներ» ԿԾ՝ 39, «Զբոսաշրջություն» ԿԾ՝ 20 ուսանող/, բացարձակ առաջադիմությունը կազմում է 74,68%:

Քննաշրջանը կազմակերպվել է սահմանված ժամկետներում և հեռավար, և լսարանային տարբերակներով: Հեռավար քննությունները տեսաձայնագրվել են: Գրավոր բողոքներ չկան:

Գ. Ավետիսյանը ներկայացրեց նաև ֆակուլտետի 2020-2021 ուստարվա աշնանային /I/ և գարնանային /II/ կիսամյակների քննաշրջանների արդյունքները ըստ կուրսերի:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.11 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին.- Ֆակուլտետի 2020-2021 ուստարվա տարեկան քննաշրջանների արդյունքները ընդունել ի գիտություն:

2. ***Լսեցին.-2020-2021 ուստարվա երկրորդ կիսամյակի լուծարքային շրջանի ամփոփման մասին:/Զեկ. Գ. Ավետիսյան/***

Գ. Ավետիսյանը նշեց, որ 2020-2021 ուստարվա երկրորդ կիսամյակի առաջին և երկրորդ լուծարքային շրջանները կազմակերպվել են սահմանված ժամկետներում:

Առաջին լուծարքային շրջանին մասնակցել են 20 ուսանող /«Ֆինանսներ» ԿԾ՝ 13, «Զբոսաշրջություն» ԿԾ ՝7 ուսանող/: Առաջին լուծարքային շրջանը հաղթահարել են 14 ուսանող: Երկրորդ լուծարքային շրջանին մասնակցել են 6 ուսանող, որի արդունքում 2 ուսանող չեն հաղթահարել լուծարքները և ներկայացվել են հեռացման:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.11 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին.- 2020-2021 ուստարվա երկրորդ կիսամյակի լուծարքային շրջանի արդյունքները ի գիտություն:

3. ***Լսեցին.- Հաղորդում ամբիոններում 1-ին կիսամյակի դասընթացների փաթեթների առկայության և վերանայման ընթացքի մասին /Զեկ. Մ. Միքայելյան, Գ. Հովհաննիսյան/:***

Մ. Միքայելյանը հաղորդեց, որ դեռևս ս/թ հուլիսի 28-ին պրոֆեսորադասախոսական կազմին ուղարկվել են անհատական

բեռնվածությունները և նշվել, որ մինչև 2021-22 ուստարվա սեպտեմբերի 15 ներկայացնեն/վերանայեն/ 1-ին կիսամյակի դասընթացների փաթեթները: Ս/թ օգոստոսին ամբիոնի կողմից կատարվել է հիշեցում պրոֆեսորադասախոսական կազմին: Սակայն հոկտեմբերի 1-ի դրությամբ /այդ մասին խոսվել է ամբիոնի նիստում/ 2 պարտադիր և 1 կամընտրական դասընթացների փաթեթներ չեն եղել: Ամբիոնի կողմից դասախոսներին տրվել է 1 շաբաթ բացը լրացնելու համար: Մ. Միքայելյանը նշեց նաև, որ մինչև ս/թ հոկտեմբերի 10-ը դասախոսները պետք է ամբիոնին տրամադրեին 1-ին կիսամյակի դասընթացների էլեկտրոնային դասախոսությունները, նյութերը, դասագրքերը: Այս հարցում ևս կան որոշակի խնդիրներ, որոնք կլուծվեն կիսամյակի ընթացքում:

Գ. Հովհաննիսյանը նշեց, որ Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնում նույնպես դեռևս ս/թ հուլիսին պրոֆեսորադասախոսական կազմին ուղարկվել են անհատական բեռնվածությունները և սահմանվել է ժամկետ/ մինչև 2021-22 ուստարվա սեպտեմբերի 15 / ներկայացնեն/վերանայեն/ 1-ին կիսամյակի դասընթացների փաթեթները: Ս/թ օգոստոսին ամբիոնի կողմից կատարվել է հիշեցում պրոֆեսորադասախոսական կազմին: Սահմանված ժամկետում ամբիոնին են տրամադրվել 2021-22 ուստարվա 1-ին կիսամյակի բոլոր դասընթացների փաթեթները: Ինչ վերաբերում է 1-ին կիսամյակի դասընթացների դասախոսությունների, նյութերի, դասագրքերի տրամադրմանը, այս հարցում ամբիոնը դեռ ունի անելիքներ:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.2 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին. - Հաղորդումը ամբիոններում 1-ին կիսամյակի դասընթացների փաթեթների առկայության և վերանայման ընթացքի մասին ընդունել ի գիտություն

4. ***Լսեցին.- Հաղորդում 1-ին կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների նախապատրաստական աշխատանքների մասին /Զեկ. Գ. Ավետիսյան/:***

Գ. Ավետիսյանը հաղորդեց I կիսամյակի առաջին ընթացիկ քննությունները և ստուգումները նախատեսվում են կազմակերպել առկա ս/թ հոկտեմբերի 26-30 ընկած ժամանակահատվածում: Կազմվել են ընթացիկ քննությունների և ստուգումների իրականացման ժամանակացույցերը ըստ կուրսերի և ըստ օրերի/ժամանակացույցերը կցվում են/: Համապատասխան մասնագիտական ամբիոնները նախապես հստակեցրել են ընթացիկ քննությունների և ստուգումների իրականացման ձևերը և սահմանված ժամկետներում պահանջել են տոմսերը, թեստերի նմուշները:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.2 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին. - Հաղորդումը I կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների նախապատրաստական աշխատանքների մասին ընդունել ի գիտություն:

5. Լսեցին. - ՄԿՈՍ բաժնի կողմից իրականացված ԵՊՀ Իջևանի մասնաճյուղից բավարարվածության ուսանողական հարցման /2020-21ուստարի/ արդյունքների ներկայացման մասին/ Զեկ. Մ. Միքայելյան, Գ. Հովհաննիսյան/:

Մ. Միքայելյանը ներկայացրեց հարցման վերաբերյալ ուսանողների բավարարվածության մասին տեղեկատվությունը, անդրադարձավ յուրաքանչյուր հարցի: Նա նշեց, որ հարցմանը մասնակցել են ուսանողների 46% և ներկայացրեց առջարկություններ: Մասնավորապես.

1. Արդյունքները արժանահավատ պետք է համարել, եթե հարցմանը մասնակցել են ուսանողների առնվազն 70 տոկոսը,
2. Եթե որևէ հարցմանը չի պատասխանել հարցման մասնակիցների առնվազն 80 տոկոսը, նույնպես արդյունքը համարել ոչ արժանահավատ /օրինակ, «ֆինանսներ» մասնագիտության հարցման 26 մասնակիցներից ֆեյսբուքյան էջին առնչվող հարցմանը պատասխանել է 11-ը/:
3. Եթե հարցմանը ներկա են ուսանողների թվի 70 տոկոսից պակասը, ապա հարցումը պետք է նորից անցկացնել:

Գ. Հովհաննիսյանը նշեց որ հարցմանը մասնակցել են Զբոսաշրջություն ԿԾ սովորող ուսանողների 12%, այդ իսկ պատճառով արդյունքների քննարկումը նպատակահարմար չէ:

Գ. Հովհաննիսյանը առաջարկեց Հարցման թերթիկները քննարկել ամբիոնների հետ, փոխել ձևակերպումները, /կուրատորի մասին հարցը հանել, ԿԾ-ի ղեկավարի մասին հարցը վերաձևակերպել/

Արտահայտվեցին և ներկայացրեցին առաջարկություններ.- Գ. Ավետիսյանը, Գ. Մինասյանը

1. Առաջարկում ենք նախքան հարցման իրականացումը հարցաշարը շրջանառել դասախոսների և այլ շահագրգռ անձանց շրջանում՝ գոյություն ունենցող առաջնահերթությունների և խնդիրների վերաբերյալ լրացուցիչ հարցեր դիտարկելու համար:

2. Առաջարկում ենք հարցման շրջանակներում հաշվարկված ցուցանիշների դինամիկ պատկերը տարանջատել նաև ըստ առանձին կրթական ծրագրերի և տրամադրել դրանք համապատասխան ամբիոններին

3. Առաջարկում ենք նախքան հարցման իրականացումը հարցաշարը քննարկել նաև ուսանողների հետ՝ հարցադրումները ճիշտ հասկանալու նպատակով,

4. Առաջարկում ենք կատարել հարցվողների ճիշտ ընտրանք:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.2 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին.-1. ՄԿՈԱ բաժնի կողմից իրականացված ԵՊՀ Իջևանի մասնաճյուղից բավարարվածության ուսանողական հարցման /2020-21ուստարի/ արդյունքները ընդունել ի գիտություն:
Որոշեցին.-2. Գիտական խորհրդի կողմից կատարված առաջարկությունները ներկայացնել ՄԿՈԱ բաժին:

6. Ընթացիկ հարցեր.

6.1. Լսեցին- ԵՊՀ ԻՄ ներքին դրամաշնորհային ծրագրով ֆինանսավորված Ֆակուլտետի Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի պրոֆեսոր Մ. ՄԻքայելյանի ղեկավարությամբ իրականացվող «Սեփականության իրավունքի հատկորոշվածության խնդիրները կորպորատիվ կառավարման համակարգում (Տավուշի մարզի կազմակերպությունների օրինակով)» թեմայով հետազոտական աշխատանքի կատարման ընթացիկ հաշվետվության մասին: /Զեկ. Մ. Միքայելյան/

Մ. Միքայելյանը հաղորդեց, որ կատարվել է «Սեփականության իրավունքի հատկորոշվածության խնդիրները կորպորատիվ կառավարման համակարգում (Տավուշի մարզի կազմակերպությունների օրինակով)» թեմային առնչվող գրականության ուսումնասիրություն, ուսումնասիրվել է սեփականաշնորհման և կորպորատիվ կառավարման ԱՊՀ երկրների /մասնավորապես՝ ՌԴ /փորձը:

Ուսումնասիրվել է կորպորատիվ կառավարման վիճակը և հիմնավորվել կազմակերպություններում կառավարման գործընթացներին սեփականության իրավունք ունեցող ներքին և արտաքին շահառուներին կառավարմանը մասնակցելու օրենսդրական փոփոխությունների անհրաժեշտությունը:
Արտահայտվեցին - Հ. Մարգարյանը, Ա. Սարիբեկյանը:

Արտահայտվողները նշեցին, որ ներկայացված հաշվետվությունում աշխատանքները կատարվել են ըստ պայմանագրով նախատեսված առաջադրանքի և օրացուցային պլանին համապատասխան: Հետազոտական աշխատանքը կատարված է պատշաճ կերպով, համապատասխանում է նմանատիպ աշխատանքների ներկայացման պահանջներին:

Արտահայտվողները դրական կարծիքներ հայտնեցին հետազոտական աշխատանքի կատարման ընթացքի մասին:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.20 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին – Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի պրոֆեսոր Մ. ՄԻքայելյանի «Սեփականության իրավունքի հատկորոշվածության խնդիրները կորպորատիվ կառավարման համակարգում (Տավուշի մարզի կազմակերպությունների օրինակով)» թեմայով հետազոտական աշխատանքի կատարման ընթացիկ հաշվետվությունն ընդունել ի գիտություն:

6.2. Լսեցին- ԵՊՀ ԻՄ ներքին դրամաշնորհային ծրագրով ֆինանսավորված Ֆակուլտետի Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի պրոֆեսոր Գ. Հովհաննիսյանի ղեկավարությամբ իրականացվող «Լուսահովիտ համայնքի գյուղական զբոսաշրջության զարգացման նախագծի մշակում» թեմայով հետազոտական աշխատանքի կատարման ընթացիկ հաշվետվության մասին: /Զեկ.Գ. Հովհաննիսյան/

Գ. Հովհաննիսյանը հաղորդեց, որ «Լուսահովիտ համայնքի գյուղական զբոսաշրջության զարգացման նախագծի մշակում» թեմայի շրջանակներում իրականացվել է համայնքի մասին տեսական նյութի հավաքագրում: Տրվել է համայնքի համալիր երկրագրական նկարագրությունը, նախանշվել /ուրվագծվել/ են զբոսաշրջային հնարավորությունները և առկա հիմնախնդիրները:

Այժմ պլանավորում ենք գյուղի վերաբերյալ վիճակագրական տվյալների /գյուղատնտեսական հողահանդակներ, անասունների գլխաքանակ, մշակաբույսեր և այլն/ հավաքագրում և այլ հնարավորությունների ճշտում իրականացնել:

Արտահայտվեցին - Պ. Ասիլբեկյանը, Ա. Պոտոսյանը:

Արտահայտվողները նշեցին, որ հետազոտական աշխատանքը կատարված է պատշաճ կերպով, համապատասխանում է նմանատիպ աշխատանքների ներկայացման պահանջներին: Հաշվետվությունում աշխատանքները իրականացվել են պայմանագրով նախատեսված օրացուցային պլանին համապատասխան:

Արտահայտվողները դրական կարծիքներ հայտնեցին հետազոտական աշխատանքի կատարման ընթացքի մասին:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.20 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին – Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի պրոֆեսոր Գ. Հովհաննիսյանի ղեկավարությամբ իրականացվող «Լուսահովիտ համայնքի գյուղական զբոսաշրջության զարգացման նախագծի մշակում» թեմայով հետազոտական աշխատանքի կատարման ընթացիկ հաշվետվությանն ընդունել ի գիտություն։

Գիտական խորհրդի նախագահ՝ Գ. Ավետիսյան

Քարտուղար՝ Ա. Ալեքսանյան